

**5.4. Դժբախտ պատահարներն արտադրությունում 2010 թվականին**

Ըստ հանրապետության կազմակերպություններում աշխատանքային գործունեության ընթացքում ժամանակավոր անաշխատունակության, դժբախտ պատահարների և վնասվածքների վերաբերյալ ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալների, աշխատանքի անվտանգության նորմերի խախտման պատճառով 2010թ. արձանագրվել է 59 արտադրական դժբախտ պատահար: 1000 աշխատողի հաշվով (նրանց թվաքանակը հաշվարկված է ըստ ներկայացված հաշվետվություններում բերված աշխատողների միջին ցուցակային թվաքանակների) տուժածների տեսակարար կշիռը կազմել է 0.7:

**Դժբախտ պատահարների դեպքերի և տուժածների քանակական բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2010թ.**

	Դեպքերի քանակը, միավոր	Տուժածների թվաքանակը, մարդ		նրանցից՝ մահացածներ	
		ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
ք.Երևան	28	28	3	1	-
Արագածոտն	-	-	-	-	-
Արարատ	3	3	-	1	-
Արմավիր	2	2	-	-	-
Գեղարքունիք	-	-	-	-	-
Լոռի	3	3	-	1	-
Կոտայք	1	1	-	-	-
Շիրակ	1	1	-	1	-
Սյունիք	21	21	1	4	-
Վայոց ձոր	-	-	-	-	-
Տավուշ	-	-	-	-	-
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>59</b>	<b>59</b>	<b>4</b>	<b>8</b>	<b>-</b>

Աշխատունակությունը 1 և ավելի օրով կորցրած անձանց ժամանակավոր անաշխատունակությունն ավարտվել է 2010թ., անաշխատունակ մարդ-օրերի գումարային քանակը կազմել է 2.4 հազ. մարդ-օր:

Դժբախտ պատահարների հետևանքով 6 տղամարդ դարձել է II և III խմբի հաշմանդամ (2-ական՝ համապատասխանաբար ՀՀ Արարատի, Լոռու և Սյունիքի մարզերում):

2010թ. հանրապետությունում աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման ծախսերը, որոնք տրվում են տուժողին կամ տուժողի մահվան դեպքում դրա իրավունքն ունեցող անձանց, կազմել են 286.8 մլն. դրամ, որից ժամանակավոր անաշխատունակության նպաստներ՝ 47.1 մլն. դրամ, կորցրած աշխատավարձի փոխհատուցումներ՝ 46.2 մլն. դրամ, միանվագ նպաստներ՝ 66.9 մլն. դրամ, բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգման ծախսեր՝ 31.4 մլն. դրամ:

Աշխատանքի պահպանման միջոցառումների վրա ծախսված գումարը կազմել է 580.7 մլն. դրամ, որից հատուկ արտահագուստի ձեռք բերման համար՝ 82.4 մլն. դրամ, անհատական պաշտպանության միջոցառումների վրա՝ 354.9 մլն. դրամ: